ԵՐԳԵՐ ՂՐԻՄԻ ՇՈՒՐՋԸ

Ղրիմի թերակղզուց տեղահան եղած հայերը, թե Սամարի տափաստանում գտնվելիս և թե Դոնի ափ գալուց հետո, երկար ժամանակ չէին կարողանում մոռանալ իրենց ծննդավայր Ղրիմը և միշտ հուսով էին, որ մի օր պիտի վերադառնան իրենց նախկին բնակավայրը։ Նոր Նախիջևանը հիմնվելուց հետո ևս միշտ են փորձեր եղել՝ փախչելու և վերադառնալու Ղրիմ, շատերին հաջողվել է այդ։ Քաղաքի Մագիստրատի գործերի մեջ կան բազմաթիվ մեղադրական դատավճիռներ Ղրիմ փախչողների վերաբերմամբ։ Օրինակ 1793 թվականին «Առաքել Նազարովի կինն՝ Ալմաստն գաղտուկ Խրիմ փախչելու էր, իմացվեցավ. բռնեցինք, հարս արինք, Թերղի խազարն քեֆիլ ելև...»[1]։

Այսպիսի դեպքեր խիստ շատ են։

Ղրիմ վերադառնալու ընդհանուր ցանկությունը այնքան մեծ է եղել, որ դրա շուրջը հորինված են բազմաթիվ երգեր, թեև դրանց երգելը Մագիստրատը արգելել էր, իսկ երգողներին՝ պատժել։ Այդ երգերը մեզ չեն հասել, բայց մինչև այսօր Նախիջևանցիք վաղ գարնանը, երբ դուրս է գալիս առաջին գարնանային զատիկ կոչված միջատը («պոճիկը») վերցնում են իրենց ձեռների վրա և դիմում նրան.

Զադի՛դ, զադի՛դ
Խրիմի ջամփան ո՞րն է։

Ծերերը ասում էին, որ այդ զատիկ կոչված կարմրաշերտ սև միջատները թռչում են միշտ դեպի Ղրիմի կողմերը, փախչողները նրանց թռած ճամփի ուղղությամբ են գնացել դեպի Ղրիմ։

Մեզ հասել են հետևյալ անպաճույճ տողերը։

Զադի՛դ, զադի՛դ
Գարմիր բոշիկ,
Խրիմի ջամփան ո՞ր քովն է,
Խրիմի ջամփան ո՞ր քովն է.
Խրիմի ջամփան մերն է,
Խրիմի ջամփան մերն է,
Դուներս, դեղերս հոն է,
Արի՛, դա՛ր մեզի Խրիմ,
Ինքդ թեղ մը շուտ փախի՛ր։

Նոր Նախիջևանից Ղրիմ տեղափոխվելը արգելված էր, բայց երբ Ղրիմը միացրին Ռուսաստանին (1783) և անցավ բավականին ժամանակ, սկսվեց նորմալ երթևեկություն, շատ և շատ Նախիջևանցիք առանց Ղրիմ տեղափոխվելու ձեռք բերին այնտեղ խոշոր պարտեզներ և այգիներ։ Նախիջևանցիք Ղրիմի այգեգործության մեջ մինչև վերջը բռնում էին պատկառելի տեղ։

Ղրիմից գաղթելուց հետո այնտեղի այգեպանները իսկույն սկսեցին պարտեզների և այգիների համար հարմար տեղեր փնտրել։ Նրանք բռնեցին Դոնի ափը, բոլոր հովիտներն ու ձորերը։ Դոնի ափին մեծ պարտեզ տնկեցին Զոռչոփյանները, որը իր գոյությունը պահպանեց մինչև 1900 թվականները, այնտեղ այժմ «Կարմիր Աքսայ» կոչված գյուղատնտեսական մեքենաների գործարանն է։ Սուրբ Խաչ վանքի մոտերքը, Սալխըն տերեյում պարտեզներ տնկեցին Կոզոտյանները, որոնց ազարակում այժմ էլ գոյություն ունի մեծ պարտեզ, Սրբամաքեշյանները, Բուրդոտյանները, Մկրտիչ Զոռչոփ-օղլուն և շատ ուրիշներ։ Զոռչոփյանները և Կոզոտյանները սերնդե-սերունդ զբաղվել են այգեգործությամբ։ Մենք ներքևում մեջ ենք բերում այգեպան և գինեգործ Սերովբե Զոռչոփյանի մեջ հանձնած մի ոտանավորը, որը նրա ասելով կոչվել է «Զոռչոփի երգ», իսկ նրա մոտ ծառայող Թորոսի

[1] Ս. Պապայան. Օրացույց 1920 թ. Նոր Նախիջևան, 1919, էջ 88։

ասելով, կոչվել է «կողոտի երգ», Սերովբեն վերագրում է իր տոհմին։

Սուգաքի գերեն, Ջատռի ջամփան,
Բախչա ունեի ես կովագան.
Ջոր ու չամիչ, կինին րոլեն-րոլ
Գեմի-գեմի գրջամփեի Ստամբոլ։
Ջոռով առին, բերին Նախշրվան.
Էլլա, ինգա Սալխըն Դերան,
Արուն քրգինքով բախչա արի,
Ջամփան նայեցա օխտը դարի,
Ջառերը մեծցան, մորի դառձան,
Պաշլայից եմիշ տալ բավական.
Ֆըշնա, զերդալի, դեղին գեռաս,
Մեյդան կուկան, ինչքան ուզենաս.
Ջեշիտ-չեշիտ տանձ ու խնձոր,
Ալիչա, գոգամ և սև սալոր,
Դեսքով-շենքով շատ փառավոր,
Ինչքան դուշիս, գեր ամեն օր,
Համա չունին Խրիմի համը,
Սալորը թթու, աղու, անհամ.
Ջկա Խրիմի անուշ խուռման,
Սերկևիլը և մուշմոլան,
Անուշ հոդով բուշտոտ այվան,
Գարմիր չումը և գաստանան,
Սև զեթունը, հեղը գապարան.
Ջկա Խրիմի համով թուզը,
Մանդռ գաղինը, խոշոր օնգուզը.
Գարմիր չումը, անուշ հավողը
Ջըսիրեցին հոսի ֆողը։
Ֆողդ սիրիմ, էսկի Խրիմ,
Ֆողիդ, ջուրիդ ես մեռնիմ.
Հնար էղավ, նորեն կուկամ,
Հոքիս մարմինս քեզի գուգամ։

Սերովբե Ջոռչոփյանի ասելով այս խոսքերը շարադրել է Մկրտիչ Ջոռչոփ-օղլուի խնդրանոք Ս. Խաչ վանքի տիրացուն, որ միշտ այցելած է եղել Մկրտիչ աղայի այգին, իսկ երգի եղանակը տվել ու երգել է Ստամպոլցի Օվանեսը, որը ապրել է անցյալ դարի սկզբից մինչև նրա կեսերը։